

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

### ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Զինիշյան» հիշատակի հիմնադրամը (ՋՀՀ), իր Համայնքային զարգացման ծրագրի շրջանակներում համագործակցելով «Վորլդ Վիժն» Հայաստան կազմակերպության հետ, (այսուհետ՝ ՎՎ Հայաստան) իրականացնում է «Վարդենիսի զարգացման նախաձեռնություն 2016-2018» ծրագիրը (ՎԶՆ 2016-18 ծրագիր):

Ելնելով Վարդենիսի տարածաշրջանի համայնքների զարգացմանն ուղղված իրենց ռազմավարական նպատակներից՝ «Զինիշյան» հիշատակի հիմնադրամը և ՎՎ Հայաստան կազմակերպությունը ՎԶՆ Ծրագրի շրջանակներում՝ ներհամայնքային քաղաքացիական նախաձեռնությունները խթանելու նպատակով հայտարարում են Դրամաշնորհային ծրագրերի մրցույթ Վարդենիսի տարածաշրջանի՝

- |              |                |              |                 |
|--------------|----------------|--------------|-----------------|
| 1. Ազատ      | 8. Գեղամասար   | 15. Կախակն   | 22. Շատվան      |
| 2. Ախաբաձոր  | 9. Գեղաքար     | 16. Կուրթ    | 23. Ջաղացաձոր   |
| 3. Այրք      | 10. Դարանակ    | 17. Կուտական | 24. Վաննան      |
| 4. Ավազան    | 11. Լճավան     | 18. Մաքենիս  | 25. Տորֆավան    |
| 5. Արեգունի  | 12. Լուսակունք | 19. Նորաբակ  | 26. Տրետուք     |
| 6. Արփունք   | 13. Խաչաղբյուր | 20. Նորակերտ | 27. Փամբակ      |
| 7. Գեղամաբակ | 14. Ծափաթաղ    | 21. Շատջրեք  | 28. Փոքր Մասրիկ |

գյուղական համայնքներում:

### Դրամաշնորհային ծրագրերի մրցույթի նկարագրությունը

ՎԶՆ ծրագրի նպատակն է հնարավորություն տալ Վարդենիսի տարածաշրջանի համայնքներին գտնելու կայուն և կենսունակ լուծումներ ներհամայնքային սոցիալ-տնտեսական խնդիրներին՝ համախմբելով առկա արտաքին և ներքին մարդկային և ֆինանսական ռեսուրսները:

Այդ լուծումներին հասնելու համար Ծրագիրը ենթադրում է.

- ստեղծելով փոխվստահության մթնոլորտ համայնքներում՝ մոբիլիզացնել համայնքների ներքին և արտաքին ռեսուրսները և ուղղել դրանք համայնքային կոնկրետ խնդիրների լուծմանը,
- միավորել տարածաշրջանի զարգացմամբ հետաքրքրված պետական և ոչ պետական հաստատությունների և անհատների ներուժը՝ ուղղելով այն դեպի

համայնքային խնդիրների կոնկրետ լուծումներին կամ այդ խնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

**Դրամաշնորհի նախապատվությունը**

**Մրցույթի շրջանակներում նախապատվություն կտրվի համայնքի.**

- քաղաքացիական հասարակության հզորացման,
- մշակութային և հոգևոր զարգացման,
- համայնքի սոցիալական որևէ շերտի /շերտերի/ շահերի պաշտպանության,
- համայնքի տնտեսական ներուժի զարգացման,
- բնապահպանական խնդիրներին ուղղված,
- այլընտրանքային էներգակիրների կիրառման,
- համայնքի տեղանքին յուրահատուկ, անվտանգ և մատչելի սննդարտադրության զարգացում (համայնքի բրենդային սննդարտադրության զարգացում),
- գյուղատնտեսական մթերքի արտադրության արդյունավետ մեթոդների կիրառում և տարածում,
- համայնքի բնակիչների ունակությունների և հմտությունների զարգացման միջոցով ընդհանուր կենսամակարդակի բարելավում:

ծրագրերին, սակայն, չի սահմանափակվի նշված ուղղություններով:

Սույն մրցույթի շրջանակներում.

- համայնքային ենթակառուցվածքների բարելավման, և
- հիմնական/միջնակարգ կրթության պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը չեն համարվում առաջնահերթային, սակայն, և վերջիններիս ֆինանսավորումը չի բացառվում:

**Դրամաշնորհներ ՉԵՆ տրամադրվում հետևյալ ուղղվածության ծրագրերին**

**Դրամաշնորհներ Չ'ԵՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ հետևյալ գործունեությունների համար՝**

- մարդասիրական անմիջական օգնություններ,
- պարտադիր պետական կրթական (հանրակրթական և բարձրա՝ույն) ծրագրերի/դասընթացների իրականացում,
- բժշկական զննումներ, անհատական բուժումներ և հիմնական հետազոտական աշխատանքներ,
- կրթաթոշակներ և անհատական ուսման վարձեր,
- առևտրային կազմակերպությունների ընթացիկ գործունեության (կամ գործունեությանը ուղղված) աջակցում, ինչպես նաև այդ գործունեություններին նպաստող սարքավորումների ձեռքբերում,
- գիտական/հետազոտական աշխատանքներ,

- արտասահմանյան գործուղումների, Հայաստանից դուրս կազմակերպվող զարգացման միջոցառումների, փորձի փոխանակումների մասնակցելու ծախսեր:

**Դրամաշնորհի չափը**

**Յուրաքանչյուր համայնքի համար նախատեսված դրամաշնորհի առավելագույն չափը  
3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ է:**

**Կտրամադրվի 8-ից - 10 դրամաշնորհ:**

**Մրցույթին մասնակցելու հատուկ պայմաններ**

Մրցույթին մասնակցող բոլոր համայնքները պետք է բավարարեն հետևյալ պայմաններին.

- Համայնքի մրցութային փաթեթը (նախագիծ-առաջարկը և բոլոր հավելյալ փաստաթղթերը) պետք է պատրաստվի և հանձնվի տվյալ համայնքի Համայնքային Ակտիվ Խմբի (ՀԱԽ) կողմից կամ Վարդենիսի տարածաշրջանում գործող և գյուղական համայնքների զարգացմամբ հետաքրքրված հասարակական կազմակերպության և/կամ հիմնադրամի կողմից: Նախագիծ-առաջարկի մշակման բոլոր փուլերում ՀԱԽ-ը պետք է ակտիվ համագործակցի համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքապետարան և ավագանիներ, այսուհետև՝ ՏԻՄ) հետ:
- Համայնքը պետք է ունենա ծրագրով ստեղծվելիք արժեքների պահպանման պլան,
- Ծրագիրը պետք է ներկայացվի համայնքի ընդհանուր ժողովին և հաստատում ստանա համայնքից և ՏԻՄ-ից,
- Ծրագիրը պետք է ընտրված լինի համայնքային մասնակցությամբ և ապահովի ամբողջ համայնքի կամ նրա մեծամասնության ներդրումները,
- Ծրագրի բյուջեն և ծախսերը պետք է հասանելի լինեն հանրությանը,
- ՀԱԽ-ի կողմից ներկայացված նախագիծ-առաջարկը պետք է ունենա համայնքի կողմից համաներդրման/համաֆինանսավորման բաղադրիչ.
- Շահառու համայնքը ծրագրի իրականացման համար պետք է ներդրում կատարի ոչ պակաս քան ակնկալվող Դրամաշնորհի գումարի 30%-ի չափով, որի ոչ պակաս քան.  
-10%-ը պետք է լինի կանխիկ գումարի տեսքով, իսկ մնացած  
-20 %-ը կարող է լինել բնափրային և/կամ աշխատուժով:
- Մրցույթին մասնակցող համայնքը/ՀԱԽ-ը պետք է նախապես հոգա ՀՀ օրենսդրությանը համապատասխան համայնքի արտաբյուջետային նոր հաշիվ բացելու համար: Ծրագրի բոլոր ֆինանսական մուտքերը և ծախսերը պետք է

կատարվեն այդ հաշվից և վավերացված լինեն գյուղապետի և ՀԱԽ առնվազն երկու անդամի ստորագրությամբ:

**Նախագիծ-առաջարկի հետ ներկայացվող լրացուցիչ փաստաթղթերի պարտադիր փաթեթ**

- ՀԱԽ-ի տարեկան գործողությունների աշխատանքային պլանի պատճեն:
- ՀԱԽ-ի, համայնքապետի և ավագանու համատեղ ընդլայնված նիստի արձանագրություն, որում հաստատվել է առաջարկը, (ցանկալի է, որ այդ նիստին և/կամ համայնքային ընդհանուր ժողովին դիտորդի կարգավիճակով նախապես հրավիրվի ՎՎ Հայաստանի և/կամ ՋՀՀ աշխատակիցը):
- Տեղեկատվություն համայնքի արտաբյուջետային հաշվի մասին:
- Տեղեկություններ համայնքի կողմից կատարվող ներդրումների վերաբերյալ՝ ըստ տեսակների:
- Հավաստի տեղեկություններ այլ ներդրումների մասին:

**Նախագիծ-առաջարկների իրականացման վերջնաժամկետը**

Համայնքների կողմից մրցույթին ներկայացված Նախագիծ-առաջարկների իրականացման վերջնաժամկետն է 2017թ. մայիսի 20-ը :

**Նախագիծ-առաջարկների ներկայացման կարգը և հաստատումը:**

Այս մրցույթի ընթացքում ստացված բոլոր նախագիծ-առաջարկները կքննարկվեն և կհաստատվեն ՋՀՀ-ի և ՎՎ Վարդենիսի Տարածքային զարգացման կենտրոնի աշխատակիցների և տարածաշրջանի զարգացմամբ հետաքրքրված այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծված հանձնախմբի կողմից:

- Դրամաշնորհի մրցույթին մասնակցելու փաթեթ (հայտարարություն և ուղեցույց) ստանալու համար կարող եք դիմել ՎՎ Վարդենիսի Տարածքային զարգացման կենտրոնի գրասենյակ յուրաքանչյուր աշխատանքային օր (երկուշաբթից ուրբաթ) ժամը 10.00-17.00:
- Դրամաշնորհին մասնակցելու և անհրաժեշտ խորհրդատվություն ստանալու համար դիմել յուրաքանչյուր երեքշաբթի և հինգշաբթի օրերին, ժամը 15:00-17:00:
- Նախագիծ առաջարկությունների փաթեթները կընդունի Վորլդ Վիժն կազմակերպության ներկայացուցիչը:
- Խորհրդատվություն կարելի է ստանալ նաև շաբաթվա այլ օրերին՝ ըստ նախապես ձեռք բերված պայմանավորվածության: Խորհրդատվության համար դիմել ՎՎ Վարդենիսի Տարածքային զարգացման կենտրոնի գրասենյակի աշխատակից Վարդան Մինասյանին հետևյալ հասցեով.

Հասցե՝ Վարդենիսի ՏԶԾ գրասենյակ  
ք. Վարդենիս, փ. Ազգալոյան, տուն 5;  
Հեռ.՝ 0037498 082 000  
Էլ. փոստ՝ [vardanwardenis27@gmail.com](mailto:vardanwardenis27@gmail.com)

**Նախագիծ-առաջարկների փաթեթների ընդունման վերջնաժամկետը  
2016թ. նոյեմբերի 25-ն է:**

Խորհրդատվություն կարելի է նաև ստանալ՝ այցելելով, գանգելով կամ էլեկտրոնային  
այլ միջոցներով հաղորդակցվելով ՋՀՀ Համայնքային զարգացման ծրագրի  
համակարգող Գևորգ Աբոյանի հետ:

Հասցե՝ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ  
ք. Երևան, Աբովյան 34, բն 5  
Հեռ.՝ 0037477 54 44 18; 099 54 47 18  
(00374 10) 54 44 17, 52 58 09  
Էլ. փոստ՝ [gevorga@jinishian.am](mailto:gevorga@jinishian.am)